ԵՂՎԱՐԴԻ ԶՈՐԱՎԱՐ ԵԿԵՂԵՑԻՆ

Կ. Ֆ. ԴԱՆԻԵԼՅԱՆ

Կենտրոնագմբեթ բազմախորան կառույցների խմբում առավել հայտնի հուշարձաններից է Եղվարդի Զորավար եկեղեցին։ Լինելով Հայաստանի տարածքում մինչև օրս պահպանված այդ տիպի վաղ հուշարձաններից մեկը, Զորավարը կենտրոնագմբեթ կառույցների էվոլյուցիայում գիտվել է իբրև կարևոր հանգույց։ Նրա ինքնատիպ ծավալատարածական կոմպոզիցիան, ներդաշնակ համաչափությունները և դեկորատիվ հարդարանքը որոշակի ազդեցություն են ունեցել միջնադարյան ճարտարապետության մեջ բավական տարածված բազմախորան եկեղեցիների ձևավորման վրա։

Զորավարի գեղարվեստաճարտարապետական առանձնահատկությունները վաղուց ի վեր գրավել են հետազոտողների ուշադրությունը։ Թ. Թորամանյանը առաջինն էր, որ գիտական շրջանառության մեջ դրեց եկեղեցու իր իսկ կազմած հատակագիծը[1]։ Յու. Յարալովը 1945 թ. հուշարձանի հետազոտմանը զուգահեռ կատարել է մանրամասն չափագրություններ[2]։ 1978 թ. Ա. Մանասյանը և Ս. Սարոյանն իրենց կատարած չափագրության հիման վրա կազմել են եկեղեցու վերակառուցման նախագիծ, որ նախատեսում է հուշարձանի լրիվ վերականգնումը։

Զորավար եկեղեցու կառուցման ժամանակը համարվում է VII դ. երկրորդ կեսը, հիմք ընդունելով, որ այն կառուցել է սպարապետ Գրիգոր Մամիկոնյանը, երբ Հայաստանի արաբական խալիֆաթին ենթակա մասի կառավարիչն է եղել (661—685 թթ.)։

Հովհաննես Դրասխանակերտցին վկայում է, որ Զորավարը կառուցվել է Արուճի տաճարի և պալատի կառուցումից հետո[3]։ Նորագույն հետազոտություններն Արուճի տաճարի կառուցման թվականներ են համարում 661—666-ը[4]։ Ըստ Վարդան վարդապետի, Արուճի տաճարը և Եղվարդի եկեղեցին կառուցվել են Անաստաս կաթողիկոսի (661—667 թթ.) օրոք՝ նույն Գրիգոր Մամիկոնյանի կողմից[5]։ Նկատի ունենալով այն, որ Արուճի տաճարն ավարտվել է 666 թ. և որ 667 թ. եղել Անաստաս կաթողիկոսի իշխանության վերջին տարին, կարող ենք ասել Եղվարդի Զորավար եկեղեցու շինության ավարտի ստույգ թվականը 667։

Եկեղեցու «Զորավար» անունը կապված է սպարապետ Գրիգոր Մամիկոնյանի անվան հետ, թեև որոշ մատենագրական աղբյուրներում այն անվանված է ս. Թեոդորոսի վանք։ Գ. Հովսեփյանը, վկայակոչելով Մաշտոց կաթողիկոսի կենսագրությունը, գտնում է, որ եկեղեցու անվանումը գալիս է Թեոդորոս Ստրատիլատի անունից, որին այն նվիրված է[6]։ Ներկայումս հուշարձանն ավերակ

---

1 Թորոս Թորամանյան, Նյութեր հայ ճարտարապետության պատմության, հ. 1, Երևան, 1919, էջ 118, 166։

2 Ю. С. Яралов, Два памятника армянской архитектуры («Сообщения Института истории и теории архитектуры», 1947, № 8).

3 Հովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտեցւոյ Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912, էջ 91։

4 Կ. Մաթևոսյան, Արուճի տաճարի 666 թ. որմանկարը (ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր», 1981, № 3, էջ 90)։

5 Հաւաքումն պատմութեան Վարդանայ Վարդապետի լուսաբանեալ, Վենետիկ, 1862, էջ 70։

6 Գ. Հովսեփյան, Խաղբակյանք կամ Գռեչյանք հայոց պատմության մեջ, Անթիլիաս, 1960, էջ 408։



Վերականգնման նախագիծ. ա. Տեսքը արևմուտքից, բ. Կտրվածք դեպի հյուսիս

վիճակում է։ Պահպանվել է միայն նրա հյուսիսային մասը՝ երեք խորաններով ու թմբուկի գմբեթի պատով։ Եկեղեցու արևմտյան մասին կից է ուղղանկյունաձև դահլիճի տեսքով գավիթը, որի անկյուններից մեկում գտնվում է ավանդատունը, բացի եկեղեցուց և գավթից, դեռ կանգուն է XII—XIII դդ. մատուռը, որը, հավանաբար, կառուցվել է ավելի հինի տեղում։ Ըստ Հովհաննես Դրասխանակերտցու, վանքը եղել է նաև գրչության կենտրոն[7]։ Այսօր էլ կարելի է տեսնել վանական կառույցների ավերակները, հատկապես համալիրի հյուսիսային մասում։

Զորավար եկեղեցին արտաքուստ բաժանված է երկու մասի՝ վարի տասնութ նիստ ունեցող ծավալը և նրա վրա բարձրացող գմբեթը։ Այսպիսի ուրվանկարը բնորոշ է բազմախորան կառույցների մեծ մասին։ Եկեղեցու պատերը շարված են կարմրավուն տուֆի խոշոր քարերով, ներպատային տարածությունը լցված է խճաբետոնով, որի լայնությունը նվազագույն է և այդ պատճառով էլ պատը համաձույլ տեսք ունի։ Կառույցի կոնստրուկտիվ կարևոր մասերը, ինչպես թմբուկը պահող կամարները և քիվն իրականացված են ավելի մեծ չափի քարերով (60×70 սմ)։ Եկեղեցու մակերեսը 95 մ է, որ բնորոշ է տվյալ տիպի հուշարձաններին (Իրինդ՝ 100, Տայոց-քար՝ 105, Անիի Փրկչի եկեղեցի՝ 110 մ)։ Ենթագմբեթային շրջանաձև տարածությունը բոլոր կողմերից երիզում են հատակագծում պայտաձև ութ խորաններ, որոնց առանցքները ուղղված են դեպի եկեղեցու կենտրոն։ Նման կոմպոզիցիայի կառույցները ձևավորված են ուղղաձիգ առանցքի շուրջը, որը սիմետրիայի առանցքն է։ Արևելյան խորանը զգալիորեն մեծացված է և ընդգծված է բեմաձև հյուստով, իսկ արևմտյանն ունի փոքր-ինչ ավելի մեծ չափեր, որը հանգեցրել է հատակագծի որոշ ձգվածությանը (արևելը-արևմուտք առանցքով)։

Խորաններն ավարտվում են գմբեթարդներով, որոնց վրա կախվում են կիսաբոլորաձև կամարները։ Խորանների միջև պատերի եզրերը ձևավորված են երեք քառորդ սյուներով, որոնք ունեն պարզ խարիսխներ և խոյակներ։ Արևելյան և արևմտյան խորանների մեծ չափերի պատճառով դրանց կամարների գագաթները չեն գտնվում այն շրջագծի վրա, ինչ որ մյուս խորանների կամարների գագաթները։ Դրա հետևանքով առաջացել է թմբուկի տրամագծի տարբերություն, որը ճարտարապետն իրականացրել է համապատասխան կամարների գագաթները մոտեցնելով շրջագծին։ Հատկանշական է, որ թմբուկը կրող երկրորդ շարքի կամարներն ունեն ոչ թե ուղղաձիգ հարթություն, այլ կոնաձև, որը բացատրվում է դրանց մակերևույթը դեպի գմբեթ անցումն իրականացնող առագաստների հետ մի հարթության վրա պահելու ձգտումով։ Ավագ խորանը պսակող կամարը հատվում է թմբուկի քիվի հետ. նման լուծումը կրկնվում է Անիի Փրկչի եկեղեցում։ Այդ քիվը, ինչպես կոնստրուկտիվ տեսակետից, այնպես էլ տեսողական ընկալման առումով, հիմք է հանդիսանում գմբեթի համար։ Քանի որ գմբեթը և ստորին ծավալի տանիքը չեն պահպանվել, հետազոտողները զանազան ենթադրություններ են արել դրանց ձևի ու նյութի վերաբերյալ։ Յու. Յարալովը գտնում էր, որ գմբեթը եղել է բրգաձև՝ ծածկված քարե սալերով, օխտելով շինության շուրջը հայտնաբերված կղմինդրի սիտանիությունը եռանկյունի նիստերը ծածկելու համար և դրանք վերագրելով ավելի ուշ կառուցված շինության[8]։ Հ. Խալփախչյանը հակված է Եղվարդի ութանիստ եկեղեցին տեսնել կոնաձև կղմինդրե ծածկի տակ[9]։

Ըստ վերականգնման նախագծի, թմբուկը, որ ներսից գլանաձև է, իսկ դրսից 12 նիստ ունի, ավարտվում է կիսաձվաձև գմբեթով։ Վերջինս ունի սաղավարտաձև ծածկ։ Գմբեթի այս ձևը պարզվել է եկեղեցու գմբեթի պահպանված մասերի վերլուծության, ինչպես և V—VII դդ. կենտրոնագմբեթ մի շարք կա-

---

7 Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 91։

8 Ю. С. Яралов, նշվ. աշխ., էջ 6։

9 О. Х. Халпахчьян, Восьмиапсидные центрально-купольные сооружения средневековой Армении («Архитектурное наследство», № 30, 1982, с. 71).

ռույցների՝ Մաստարայի, Արագածի, Գրիգորաշենի, Հռիփսիմեի և այլ հուշարձանների համեմատական հետազոտության հիման վրա։ Պետք է ենթադրել, որ սրանց գմբեթների կիսաձվաձև գծագրությունը եղել է նախապես մտածված և ոչ թե սխալի հետևանք է։ Սաղավարտաձև ծածկը, հիմնականում պայմանավորված լինելով գմբեթի ձևով, ինչպես նաև նրա գագաթների և թմբուկի արտաքին քիվի նախագծային նիշերի հարաբերակցությամբ, համանման է Մրենի ու Կարմրավորի հուշարձաններին[10]։ Գմբեթի տանիքի, ինչպես նաև ստորին ծածկի նիստերի թիվը համապատասխանում է բազմանկյունների ուղղահայաց նիստերին, որոնք ներքևում 18-ն են, իսկ վերևում՝ 12-ը։ Ծածկը կղմինդրից է. ընդ որում պետք է նշել, որ տեղում հայտնաբերված ուղղանկյունաձև սալերը տեղ են գտել առաջին և երկրորդ շարքերում։ Թմբուկի նիստերի վրա կան ծածկի հետքեր, որոնց վերին նիշը լուսամուտները ծածկել է 30—40 սմ չափով։ Նման բարձր տանիքը բնորոշ է VII դ. մի ամբողջ շարք հուշարձանների (Թալինի տաճար, Հռիփսիմե, Արուճ, Լմբատավանք), որոնց վերականգնման ժամանակ կղմինդրե ծածկը փոխարինվել է քարե սալերով։

Նույնը կարելի է ենթադրել նաև այս դեպքում, քանի որ ըստ Ղ. Ալիշանի, հուշարձանը 1327 թ. վերականգնվել է[11]։

Որմնախարսխի վրա կանգնեցված և սրբատաշ քարով կառուցված եկեղեցին ունեցել է երկու մուտք՝ հյուսիսային և արևմտյան։ Վերջինս այն կապել է գավթի հետ։ Պահպանված հյուսիսային մուտքը ձևավորված է եղել կիսասյուներով, մուտքի տիմպանը բոլորող կամարով։ Տիմպանի վրա եղել է խաչաքանդակ՝ շրջապատված զարդաքանդակներով։

Ցուրաքանչյուր խորանում կան բարձր լուսամուտներ, որոնք դեպի ներս փոքր-ինչ լայնացել են։ Թմբուկն ունեցել է աշխարհի չորս կողմերն ուղղված պատուհաններ, որոնց ստորին մասը հորիզոնական է և թմբուկի քիվի վերնամասի հետ մի նիշի վրա է գտնվում։ Հետաքրքիր է, որ գմբեթի պատուհանները զգալիորեն ավելի խոշոր են ստորին պատուհաններից (պահպանված է վերջիններիս համաչափությունը՝ լայնության և բարձրության 1։3 հարաբերությունը)։ Դա բավական հազվադեպ է հայ միջնադարյան ճարտարապետության մեջ և թերևս կարող է բացատրվել գմբեթի նշանակությունը շեշտող լուսեղ վերնամաս ստեղծելու ձգտումով։ Հետագայում նույն տպավորությանը, այսինքն խավար ստորին մասի և լուսեղ վերնամասի հակադրությանը հասնելու համար ճարտարապետներն այլ հուշարձաններում բացվածքների քանակը ստորին ծավալում նվազեցնում են կամ դրանք հասցնում մինչև ճեղքերի չափերի, երբեմն էլ առհասարակ հրաժարվելով դրանցից (Անիի Կուսանաց անապատի եկեղեցի, Աբուղամրենց եկեղեցի, Անիի Փրկչի եկեղեցի)։

Արտահայտիչ է հուշարձանի հարդարանքը, որ նպաստում է կառույցի տեկտոնիկայի բացահայտմանը։ Ամբողջ ստորին ծավալն ունի կոնաձև ավարտվող եռանկյունի խոր որմնախորշեր։ Դրանք զարդարված են առանց խոյակների երեք քառորդ սյուներով, որոնց հիմք են ծառայում կիսաբոլորաձև եզրերով քարերը։ Միայն գլխավոր (արևմտյան) մուտքը եզերող որմնախորշերում մուտքի նշանակությունը շեշտելու համար սյուներն օժտված են զարդաձևերով։ Սա հորինվածքային մի լուծում է, նման Իրինդի եկեղեցուն։

Պատուհանները եզերում են խոշոր զարդաքանդակ պսակները, որոնց բուսամոտիվները տարբեր են։ Խոր որմնախորշերի և կիսաբոլորաձև կամարաղներով պատուհանների հաջորդականությունը շինությանը հաղորդել է խիստ ռիթմականություն և հավասարակշռվածություն։ Ստորին և վերին ծավալները պսակող քիվերը կազմված են երեք տրամատներից. ստորին կիսաբոլորաձև գլանաքիվի վերևում ուժեղ թեքություն ունեցող ամբողջ միջին հարթությամբ

---

[10] А. С. Манасян, О возможностях реставрации черепичных кровель на купольных сооружениях раннесредневековой Армении («Тез. докл. V респ. науч. конф. по проблемам культуры и искусства Армении», Ереван, 1982, с. 356—358).

[11] Ղ. Ալիշան, Այրարատ. Վենետիկ, 1890, էջ 119—200։

արված են դամբյուղաձև հյուսվածքներ։ Ավելի վեր՝ քիվի նեղ ելուստի վրա, քանդակված է ալիքաձև ցողուն՝ խաղողի ողկույզներով և տերևներով։ Թմբուկի նիստերի անկյունները ձևավորված են նրբաքեղ կիսաբոլորաձև որմնասյուներով, որոնք ներդաշնակում են ստորին ծավալի սյուներին։ Ինտերյերներում խորանների կամարների իմպոստները գոգավոր սեղանաձև հարթ քարեր են։ Ներքին և արտաքին հարթությունների վրա պահպանվել են վարպետների շինարարական տարբերանշանները, որոնք նման են Իրինդի համապատասխան նշաններին։ Դատելով խորաններում պահպանված ծեփի մնացորդներից, եկեղեցու ներսում եղել են որմնանկարներ։ Ծեփի հետազոտությունը հիմք է տալիս այն թվագրել VII դարով[12]։ Արուճի, Զվարթնոցի և Զորավարի ծեփի բացարձակ նույնությունը տարակույս չի թողնում, որ հուշարձանը ներսի որմնանկարներով ծածկվել է կառուցումից անմիջապես հետո[13]։ Ինչպես տեսանք, Զորավար եկեղեցին լրիվ ավարտված կառույց է և նրա հատակագծային և ծավալատարածական կոմպոզիցիայի մշակվածությունը ենթադրում է իրականացման որոշակի փորձ։

Եկեղեցու կոմպոզիցիայի ծագման հարցը շոշափել են մի շարք ուսումնասիրողներ։ Այսպես Ն. Տոկարսկին գրել է. «Եղվարդի եկեղեցին կառուցող Գրիգոր Մամիկոնյանի իշխանության սկիզբը զուգադիպեց Զվարթնոցի շինարարության ավարտին։ Այդ հանգամանքն էլ, մեր կարծիքով, թույլ է տալիս ենթադրություն անել, թե ինչպես արծարծել Եղվարդի եկեղեցու ձևի ծագման հարցը, հաշվի առնելով, որ այդ տիպի ավելի վաղ ուրիշ հուշարձաններ մենք չգիտենք։ Նրա շինարարը չի պատճենահանել տեղական կամ արտասահմանյան ինչ որ պատրաստի օրինակ, այլ, անշուշտ, եղել է նոր ավարտված Զվարթնոցի տպավորության տակ և ելնելով շենքի ոչ մեծ մասշտաբից, ստեղծագործաբար վերամշակել է յարուսային բազմանիստ եկեղեցու գաղափարը»[14]։ Սակայն համեմատաբար վերջերս հայտնաբերված Արագածի վեցախորան հուշարձանը, որի դեղարվեստաճարտարապետական ձևերը հիմք են տալիս այն թվագրելու VI դ. վերջով, այսինքն Զվարթնոցի կառուցումից առաջ, թույլ է տալիս վիճարկել Զորավար եկեղեցու ձևի ծագման մասին վերոբերյալ պատկերացումը[15]։ Վեցախորան հորինվածքները ութախորան կառույցներին ավելի մոտ և ազգակից տիպն են։ Այդ կառույցների ծավալատարածական լուծման հիմքում դրված է ճարտարապետական ձևը որոշող համաչափության սկզբունքը։ Դրանց մոտեցնում է բացառիկ ներդաշնակությունը՝ ներքին տարածության և արտաքին ձևավորման լիակատար համապատասխանության առումով։ Իսկ Զվարթնոցի կառուցվածքը բարդ օրգանիզմ է՝ ձևակառուցման այդ եղանակներով, ինչպես ուղղահայաց, այնպես էլ հորիզոնական ուղղությամբ տարածության աստիճանավորումով, որը կենտրոնագմբեթ շինությունների առավել զարգացած նմուշ է։ Տ. Մարությանը, հետազոտելով տվյալ հուշարձանի ձևերը, այն կարծիքն է հայտնել, որ Մաստարայի հորինվածքից հետո ընդամենը մի քայլ է մինչև մի կողմից՝ ներքին մույթերով բագարանի տիպը, մյուս կողմից՝ ութախորան կառույցների առաջացումը։ «Այսպիսով,—գրել է նա,—բոլորակությունը վերցնելով Զվարթնոցից, ութ խորանները բխեցնելով երեք քառորդ խորշեր ունեցող քառախորան տաճարներից և Մաստարայից, ստեղծվում է Եղվարդի ութ խորանները մի ընդհանուր բոլորակի մեջ առնված Զորավար եկեղեցին»[16]։

---

[12] Л. А. Дурново, Краткая история древнеармянской живописи, Ереван, 1957, с. 12.

[13] С. Х. Мнацаканян, Звартноц, М., 1971, с. 47.

[14] Н. М. Токарский, Архитектура Армении IV—XIV вв., Ереван, 1961, с. 141—142.

[15] К. К. Даниелян, Раннесредневековая шестиапсидная церковь близ поселка Арагац («Тез. докл. V респ. науч. конф. по проблемам культуры и искусства Армении», с. 302—303).

[16] Տ. Մարության, Խորագույն Հայք, Երևան, 1978, էջ 147—148։

Եղվարդի եկեղեցու հորինվածքի առաջացումը, իբրև տարբեր ձևերի և լուծումների համադրման արդյունք, անհամողիչ է թվում, քանի որ ավելի տրամաբանական է ենթադրել, որ այդքան պարզ և հավասարակշռված հորինվածքն ավելի հին է, քան զուտ ճառագայթաձև ամեն մի այլ սխեմա։ Յո. Ստրժիգովսկին նկատում է, որ «անշուշտ, նախնական ազգային ձևն ըստ երևույթին եղել է ճառագայթաձև գմբեթավոր կառույցը...»[17]։ Եվ, իսկապես, հուշարձանի խիստ զարգացած կառուցվածքը հազիվ թե նախորդեր նոր ձևավորվող տվյալ տիպի հորինվածքին։ Եղվարդի հուշարձանի ծավալային ձևերի ու համամասների համաչափությունը և խնամքով արված հարդարանքը հանգեցնում են այն մտքին, որ այդ հորինվածքը լայնորեն տարածված էր, և Զորավար եկեղեցին Հայաստանում նման կառույցների ստեղծման ճանապարհին ամենևին էլ առաջին քայլը չէր։

Զորավար եկեղեցու նման բազմախորան հուշարձանների կոմպոզիցիայի ծագման ուսումնասիրությունը թույլ է տալիս ենթադրել, որ այն եղել է ամենահին տարածական սիստեմներից մեկը, որի ակունքները հասնում են անտիկ ճարտարապետություն[18]։ Այդ խմբի հուշարձանները հատկապես տարածված են Արագածի լեռնային զանգվածին հարող շրջաններում։ Կառույցների այդպիսի մոտիկությունն էլ ցույց է տալիս դրանց համանման հատակագծային և ծավալատարածական լուծումը, նկատի ունենալով, որ կառուցման եղանակների պահպանողականությունը և կայուն, մշակված օրինակներին խիստ հետևվելը բնորոշ է ամբողջ հայ միջնադարյան ճարտարապետությանը։ Զորավար եկեղեցում արտացոլվել են VI—VII դդ. հատկանշական ծավալային զանգվածների հստակությունը, արտաքին կերպարի հետ ներքին տարածության տրամաբանական փոխադարձ կապը, դեկորատիվ հարդարանքի նրբագեղությունն ու զսպվածությունը։

Այսպիսով, բազմախորան կենտրոնագմբեթ հորինվածքների զարգացման բնագավառում հուշարձանը նրան նախորդած Արագածի Գրիգորաշեն եկեղեցուց ևս մեկ քայլ է դեպի առավել ներդաշնակ նմուշները՝ Անիի բազմախորան կառույցները։

ЦЕРКОВЬ ЗОРАВАР В ЕГВАРДЕ

К. К. ДАНИЕЛЯН

Резюме

Известная раннесредневековая церковь Зоравар в Егварде занимает важное место в истории армянского зодчества. Это один из ранних образцов многоапсидных центрально-купольных сооружений, явившихся прототипом наиболее распространенной композиции памятников анийской архитектурной школы.

Произведенная в последнее время расчистка памятника, связанная с его реконструкцией, выявила новые подробности, позволившие уточнить первоначальный вид сооружения, в особенности его купола, и уточнить время возведения памятника. До сих пор он датировался годами правления Григора Мамиконяна (661—685 гг.). Однако сопоставление сведений историков помогает установить дату сооружения церкви —667 г.

---

[17] I. Strzgowski, Die Baukunst der Armenier und Europa, Wien, 1918, B. 1, S. 250.

[18] „Всемирная история архитектуры", т. II, М., 1966, с. 256—257; т. III, Л.—М., 1973, с. 185; G. T. Rivoira, Roman architecture and its principles of construction, Oxford 1925 p. 107, 132, 185–188.